

ժայթքեց: Ոչ այս բոցը ամենաբարձրն էր և ոչ տեսնուած բիծն ամենամեծ կը համարուի, վասն զի 1870ին և 1871ին Երենկին տեսած քոցերն՝ առաջի անգամուն 155000 Հզմ. բարձրութեան չափ էին, իսկ երկրորդ անգամուանը 161000 Հզմ. թէ և Պ. Հոիկկոյի հաշուէն նուազ էր, բայց Պ. Փավարոյի հաշուէն բարձր էր, սակայն իրենց տեսակին մէջ ալ միակ ըլլալով՝ շատ նշանաւոր երևոյթներ կը ներկայացնէին որոնք բոցեղէն լեզուններու նման Արևու վրայ դարձան զահալթաւ բար յետ հասնելու այն նշանակեալ բարձրութեան: Բայց 1885ին տեսնուած արևային ժայթմունքին ժամանակ բարձրացած բոցը 228000 Հզմ. բարձրութեան կը հասնէր, այսինքն Երկրիս տրամագծէն 18 անգամ աւելի բարձր. և այս բոցերուն բարձրանալու արագութիւնը կը հասնէր 200 Հզմ. մէն մի երկվայրկեանի մէջ:

Գալով բիծերու ծաւալին լայնատ Գաղղիացի աստեղագէտն տեսեր էր բիծ մը մէջ մասն անկեամբ (1'), այն է գրեթէ Արևու տրամագծին 32 երրորդ մասին չափ, որ կը համապատասխանէ 3,4 անգամ Երկրիս տրամագծին երկայնութեանը: Հերշել 1779ին հնգապատիկ մեծ քան Երկրիս տրամագիծն տեսեր էր, 1883ին երեցած մեծ բիծն ութվայրկեան մեր Երկրէս մեծ էր, Առակոյ 1842ին՝ 167 մասնիկ անկեամբ (167') բիծ մը նշմարեց որ կը համապատասխանէր իննպատիկ Երկրիս տրամագծին, իսկ 1839ին Օգոստոսի 30ին Ամերիկացի ծովակալն Դաւիս նշմարեց 300000 Հզմ. մեծութեամբ բիծ մը որ հաւասար է 23 անգամ Երկրիս տրամագիծին: Ասոնք՝ մանաւանդ վերջինը, աչքով իսկ տեսանելի եղած պիտի ըլլան. Դաւիսի ֆիզն՝ Արևու տրամագծին չորրորդ մասին չափ էր: Ասոնք հսկայ հրաբուխներ են, որոց դիմաց երկրաւոր հրաբուխներն կայծոռիկներ են:

Բիծերն կարելի է դիտել Արևու սկաւառակին վրայ տեսաբանական գործիքներու միջոցաւ, կամ գունաւորեալ ապակի դնելով աշամերձ ոսպնածին առջև, և կամ պատկերացնելով Արևն սպիտակ են.

թակայի վրայ՝ ուր եղած բիծերն միանգամայն կը պատկերանան. (եթէ բիծերն մեծ ըլլան, իսկ թէ բիծերն փոքր ըլլան այն ատեն զօրաւոր դիտակ գործածելու է): Առաջի եղանակով իւրաքանչիւր դիտող ինքը միայն կրնայ տեսնել, իսկ երկրորդ կերպով բազմութիւն մը ի միասին կրնան տեսնել, նման մոզական լապտերի, բայց Արևու բոցերը ոչ առաջին և ոչ երկրորդ եղանակով նշմարելի են. վասն զի ջրածնի բոցերն անտեսանելի կը մնան՝ երբ Արևը դիտակի ասպարէզի մէջ զտնուի, իրեն լուսոյն սաստկութեան պատճառաւ. և որպէս զի տեսանելի ըլլան այդ բոցերը միակ միջոցն է դիտակին ասպարէզին շրջանակը և Արևու շրջանակն իրարու շատ մօտ յարմարցոյին, առանց զիրար շօշափելու կամ հագիւ շօշափելով, այն ատեն է որ նշմարելի կ'ըլլան բոցերն թիթիկ պարզագոյն ներկուած, և կը տեսնուին բոցերու տարօրինակ ձևերն. բայց բոցերու երևոյթները նշմարելի են մանաւանդ Արևու բոլորական խաւարմանց ժամանակ:

Հ. ԽՈՐԷՆ Ծ.

ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ ՓՇՐԱՆԻՔ

Բարիգու Լեզուաբանական Ընկերութեան յիշատակագրոց մէջ (Mém. de la Soc. de Linguistique de Paris. Tome XIX. 2e Fasc. 1914 էջ 122-123) Ռուսոյչապետն A. Meillet համեմատութիւն կը հաստատէ ընդ մէջ Սլաւ. Mazati և հայ. մածանիմ բառերու. Կը յայտարարէ որ յաճախ հնդկերուական հին լեզուաց համեմատութիւնքն ըրած միջոց կը հանդիպին բանասիրին առջև բառեր, որոնք ոչ ձևով և ոչ իմաստով իրարու հետ կը նոյնանան, և սակայն զանոնք իրարմէ ալ անջատեն անկարելի է: Այսպիսի երևոյթ մը կը նկատէ ընդ մէջ հինսլաւ. mazo, mazati (enduire), հայ. մածանիմ (je me colle), յուն. μαζις (pâte pétrie) և ասկէ ծագած բոլոր արմատներու՝ առանց ի բաց առնելու նաև

կատ. (aoriste) ἐμάχηον (j'ai été pétrie), հին. Սաքս. makon (bâtir, faire) և ասոր յարակից ամրող զգրմանական խոսքի բառերը: Սյա մերձեցումները միայն * mag -, * mæg - արմատ մը կը յայտարարեն որուն իմաստն անտարակոյս գործողական էր և պիտի նշանակէր անշուշտ կպչելու յարմար խիւս մը շինելու գործողութիւնը, կամ մածնելու (coaguler), իբրև ջնարակ (enduit) ծառայելու յատկութիւն ունեցող բան մը:

Գիտել կու տայ որ այս արմատի ըննութիւնն ընող բանասէրք՝ Թերագած են ուշ դարձնելու հայերէն արմատին վրայ, մինչդեռ, հայերէն մածնելիմ բառին իմաստն ամենապարզ է — je me colle à, je me coagule և է թարգմն. յու նարէն τυροῦμαι բառի: Յորայ գրոց մէջ (Ժ. 10) յուն. Τυρῶ Թարգմանուած է հայերէն մածնացունեմ և յիբաւի մածուն կը նշանակէ lait caillé. Նոյնպէս Երեմիա (ԺԳ. 11) κολλῶμαι և κολλῶ յուն. բառերն Թարգմանուած են մածնացանեմով: Դարձեալ նոյն իմաստը կը հաստատեն Յորայ (ԼԲ. 38) մածուցի զևս իբրև զվիմաս խորանարդ (յն. κεκόλληκα δὲ αὐτὸν ὥσπερ λίθον κύβον), Եսայիայ (ԽԳ. 13) մածոյց ստեճով (յն. ἐν κρίλλη ἐρούμμεσεν αὐτό), Եբրայեցւոց Թղթ. (ԺԲ. 1) մածեալ ունիմք զբազմութիւն վկայից (յուն. ἔχοντες περικείμενον ἡμῖν νέφος μαρτύρων) որոնց ամէնուն մէջ կը յայտնուի ընդհանուր հնդեւրոպական բառախումբի հասարակաց իմաստը (collar, coaguler), և հայերէն արմատը միւս զանազան լեզուաց արմատները կը միացնէ իրարու:

*
* *

Յաջորդ 124 էջին մէջ նոյն Ուսուցչապետն դիտողութեան կ'առնու առհասարակ բառը, և կ'ըսէ.

Առհասարակ մէջ սովորական չէ: Աստուածաշունչի Թարգմանիչք զայն բնաւ գործածած չեն, և Վենետիկոյ մեծ բառարանը (Հայկազեան) երկու օրինակ միայն կը յիշէ անոր. մէկէն, որ կը գտնուի Նազարեան հեղինակի մը, Երզնկացոյ,

քով, այս կը հետևի որ առհասարակ կենդանի մը, յիշատակուած խոյր (bélier) հետ միասին. միւսը կը գտնուի Եզնրկայ մէջ (Բ. 11. էջ 148) ուր առհասարակ (յոգնական հայց.) դրուած են իբրև վայրենի և ուտելի անասնոց իմաստով վայրի այծերու (chevreuils), եղաւոր (cerfs) և կինճերու (sanglier) հետ միասին:

Հ. Վարդանեան վերջերս (Հանդէս Ամս 1913. էջ 294 հայլն) յայտնեց իմաստասիրական բնագրի մը պարբերութիւնը ուսկից կը հաւաստուի վայրենի ոչխար իմաստը, և յիբաւի վրացիներէն փոխ առած է այս բառս arni ձևով, զոր Tchubinov կը Թարգմանէ monton sauvage ինչպէս որ դիտել կու տայ ինձ Պր. Ա. ճառեան:

(Գիտել կու տանք որ արդէն Առնան Բուսարանն ալ կու տայ վոյրի ոչխար կամ զանա նշանակութիւնը):

Դիտարին է անշատել այս հայերէն առհասարակ բառը յունարէն ἄρσην, ἄρσην և զենտ arsa, aršanem, aršno (արտաբերութիւն: Այս հնդեւրոպական բառի ամենացեղանիքը, ամենաբնիկ մէջ կու տան արական կենդանեաց անունները. ինչպէս sabbháh (ցուլ) և յունարէնի մէջ ալ, Ի. Հով. ἀρνεῖος, ատտիկ. αρνεῶς (խոյր bélier). Եզական է բոլորովին որ հայերէն բառն ինքնին յատուկ կենդանի մը և վայրի կենդանի մը ցուցնէ:

Հայերէն այն բառը որ իսկապէս malle իմաստն ունի, զեռ ստուգաբանութիւն լուծում մը չունի. այս է արաբ. Hübschmann (Arm. Gram. էջ 418) զայն լուծած չէ. Pedersen ոչ իսկապէս զանա կենդանեաց ենթադրութիւն մ'առաջարկած է (K. Z. XXXIX. 389): Կարելի չէ չմտածել նաև լատին aries, ուսկը. erietu (հայց.) բառերն որ կը նշանակեն խոյր bélier:

1. Meringer. — Indogerm. Forschung. XVII. 146. և.

Berneker ի բառն mazo.

Walde ի բառն maceria, միայն Boisacq անցողիկ կը յիշատակէ նայ. բառը.